



## Ս Փ Յ Ո Ւ Թ Ո Ւ Մ

ԳԵՂՐԴ Զ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ  
ՔԱՌԱՍՈՒՆՔԸ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՄԵԶ

Կիրակի, հունիսի 27-ին, տոնն էր Կաթողիկե Եկեղեցվո Սրբո Եջմիածնին, Զուգաղիպությամբ մը, այդ օրը, Սրբոց Հակոբյանց Մայր Տաճարին մեջ, հանդիսավոր սուրբ պատարագ մատուցվեցավ նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեղրդ Զ. երջանկահիշատակ Կաթողիկոսին մահվան քառասունքին առթիվ:

«Հայր մերանեն առաջ, օրվան պատարագից՝ հոգեշնորհ Տ. Հայկազուն վարդապետ Արքահամյան, որ նոր վերագրած էր Ս. Եջմիածնեն, հոգեցունց քարոզով մը բացատրեց օրվան տոնին իմաստը, բնաբան առնելով «Եկայր շինեցուք սուրբ զիսրանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» գեղեցիկ խոսքերը: «Ս. Գրիգոր Լուսավորիչ, — ըսակ հոգեշնորհ Հայրը ի մեջ ալլոց, — երբ դուքս կելլեր խոր վիրապեն, լուսո խորաններ կանգնելու մասին խորհեցավ, վասնզի անոնցմով էր, որ պիտի լուսավորվեր Հայաստան աշխարհը: Իրականացած էր իր ծրագիրը: Կառուցվեցավ Ս. Եջմիածնը ու ապրեցավ այս ժողովուրդը Լուսավորչի Հավատքով լցուն: Շատ փոթորկներ անցուց մեր երկիրը, փառքի ու տառապանքի օրեր եկան ու անցան, սակայն Մեծ Սուրբին հավատքը կառ կմնա, և գեռ պիտի շարունակի դարերու ընթացքին...»: Ակնարկելով Հայաստանի ժողովուրդին, Հայր Հայկազունը ավելցուց: «Ավանդապահ և հավատացյալ են մեր Հայրենիքի հարազատները: Ամեն կողմէ եկած էին և ամենքը ի մի կուլային իրենց Հայրապետին կորուտը, Եկեղեցին՝ իր պատվական Պետը, ժողովուրդը՝ իր իմաստում Առաջնորդը: Անոնց մեջ Լուսավորչի Հավատքը ավելի զորավոր կապրի քան արտասահմանի հալության մեջ: Հոգեկան հապրտություն զգացինք, երբ տե-

սանք կառուցվող շենքերու վողերին, կկոթողվեր նաև հավատքը մեր ժողովուրդին մեջ: Մեր եղբայրներն ու քույրերը նոն պինդ կառշած կմնան իրենց եկեղեցիներուն ու նախնիքներու հավատքին: Այս բոլորը մենք տեսանք մեր աշքերով և ոչ թե լսեցինք միայն: Եթե վերցվին լուսո խորանները, լուս չի կրնար ծագիլ Հայաստան աշխարհի վրա, և այսօր, հայկական կառավարությունը ձեռնարկած է վերանորոգելու մեր բոլոր եկեղեցիներն ու հիշատակարանները՝ իրենց հին փառքին հավասարության հասցնելով զանոնք:

Ապա հանգուցյալ Վեհափառին ակնարկելով, ան ավելցուց: «Ան վերակազմած է Հոգեւոր Ճեմարանը իր պաշտոնաթերթ ոչ Եջմիածնառով, միաբանական կանք ստեղծած է իր շուրջը, և կազմակերպած է Հայաստանի եկեղեցիները, և արտասահմանը կապած Ս. Եջմիածնին: Թեե այսօր հեռացած է մեզմե, սակայն Անոր հոգին կսավանի մեր վերև, կապրի ու կգործե մեր մեջ: Ան կույս, որ Ս. Եջմիածնա լուսը սփուխ ամբողջ հայության վրա: Ան չէ ուզած որ, նույնիսկ օր մը մութին մեջ մնա համայն հայության լուսի այս կեդրոնը և անոր համար ալ, իր կենդանության Տեղակալ նշանակած և վավերացուցած է մեր Պատրիարքական տեղապահ դերաշնորհ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը, ու փափակ հայտնած, որ օր մըն այ բաղմի իր Աթոռին վրա: Այսօրվան մեր Հայրենիքին շեն ու շող կյանքը և եկեղեցիներուն ու կոթողներուն բարձրացումը, մեծ մասամբ, կպարտինք Գեղրդ Զ. ի նման մեծ առաջնորդներուն: Ու ողջունները հաղորդելով մեր հայրենի ժողովուրդին, հոգեշնորհ Հայոց վերցացուց իր խոսքերը ըսկելով: Անոնք ևս

կհետաքրովին ձեզմով և կմաղթեն, որ դուք ապրիք երջանիկ և մնաք հայ մինչև այն օրը, ուր ամենքդ միանաք Մայր Հայրենիքին ծոցին մեջ, Արարատի փեշերուն, Աստված հաստատ թող պահն Հայաստան աշխարհը ու անփորձ՝ հայ ժողովուրդը, և անմար մնա Լուսավորչի կանթեղը, Ս. Եղմիածին:

Հավաբար սուրբ պատարագի, հոգեհանդուտի մանավոր պաշտոն կատարվեցավ ի հանգիստ նորոգ հանգուցյալ երջանկահիշատակ Հայրապետին, նախագահությամբ Եղմիածնան Տեղակալ սրբազն հոր:

Հավատացյալներու խուռն բազմություն մը կհետևեր սրտագրավ ու հոգեհովով մեղե-

դիներուն, և շատերուն աշքերուն մեջ արցունքի կայլակներ կփայլեին: Անոնք ծնրադիր, կարծեք կհաղորդակցեին Վեհափառ Հայրապետին հոգիին հետ: Հոգեհանգստյան այս թախծալից ու տպավորիչ արարողութենին ետք, հուզումը որոշ կերպով համակած էր ներկաները և բոլորին սրտանց մաղթանքն էր բազմած տեսնել Ս. Եղմիածնի Գահին վրա Գեղորգ Զ. ի արժանավոր հաշորդը, հանձին նորընտիր Տեղակալ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տեղականի:

ԹՂՓԱԿԻՑ

(Քեյրուր, «ԶԱՐԹՈՒՆՔ» օրաթեր, 8 նովիսեմբերի 1954 թ., № 239 (4931)

## ՀՈԳԵԶԱՆԳԻՍ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՎԱԽԱՆՄԱՆ ԱՌԹԻՎ

Ամբողջ աշխարհի հայությունը ցնցող բոթ՝ էջմիածնան Ամենայն Հայոց Հայրապետ Գեղորգ Զ. Չորեքշյանի վախճանումը խոր սուրբի մատնեց նաև եթովպահայությունը:

Երանաշնորհ Հայրապետի վախճանման քառասումքին առթիվ մատուցվեցավ հանդիսավոր սուրբ պատարագ և հոգեհանդիստ: Պատարագեց հոգեկոր հովիկ Հովհաննես ավագ քահանա Կեհերյան, որ գրավոր կերպով ներկայացուց նաև հանգուցյալ Հայրապետը և իր կրոնական արժանիքները:

Բացի հայ գաղութեն, ներկա էին նաև եթովպացվոց կրոնապետ Ամենապատիկ Տ. Վասիլիս արքեպիսկոպոս և հովոն համանքի կրոնապետ նիկոլա արքեպիսկոպոս իրենց հետևորդներով:

Հաջորդ կիրակին, 27 հունիսին, ԱԱրարատա միության սրահին մեջ տեղի ունեցավ հիշատակի երեկոն:

Բացման խոսքը ըրավ պարոն Հ. Նագաշյան: Ան հակիմ խոսքերով ներկայացուց վախճանյալ Կաթողիկոսը, որ Մեծի Տանն Կիլիկիո նույնապես հանգուցյալ Գարեգին Կաթողիկոսին հետ ձեռք-ձեռքի տված՝ հիմը դրավ երկու Աթոռներու միջև տիրող եղայրական գործակցության:

Ապա «Մուրադյան» երգչախոսւմքի կողմէ դարձալ երկու շարականներու երգինելին ետք, գաղութիս հոգեկոր հովիկ արժանապատիկ Տ. Հովհաննես ավագ քահանայի ՇՊահապահիչով վերջ գտավ այս հիշատակի երեկոն, որ մեծապես տպավորեց ներկաները:

Քի մը արդյունքը եղող մանրամասնությամբ ներկայացուց երանաշնորհ Վեհափառին կինսագրովիցունը և անոր կրոնական գործունելովյունը, հոգված շեշտերով ողբարով նաև մեծ կորուստը, որուն ենթարկվեցավ Հայ և միջազգային նկեղեցին: Այս բանախոսութենին ետք պարոն է. Ծեռահյան և օրիորդ Ա. Բաղրամարյան ջութակի ու գաշնակի վրա նվագեցին դասական ու հայկական երկու կտորներ:

Հետո բեմ բարձրացավ օրվան երկրորդ բանախոսը՝ պարոն Հ. Ուզունյան, որ շուրջ քաման վայրկյանի ամփոփ բանախոսությամբ մը և սահուն ու գեղեցիկ լեզվով մը ներկայացուց Ս. Էջմիածնը իրը պատմական արժեք, իր հայուն հավատքին ու գոյատեման ոգիին խորհրդանշանը և հանգուցյալ Ամենայն Հայոց Հայրապետը իրը այդ Աթոռին արժանավոր Գահակալը:

«Մուրադյան» երգչախոսւմքի կողմէ դարձալ երկու շարականներու երգինելին ետք, գաղութիս հոգեկոր հովիկ արժանապատիկ Տ. Հովհաննես ավագ քահանայի ՇՊահապահիչով վերջ գտավ այս հիշատակի երեկոն, որ մեծապես տպավորեց ներկաները:

Այս առթիվ կարծիք նաև շնորհավորել ապագա խոստացող տաղանդավոր նկարիչ պարոն Ալեքս Պողոսյանը, որ ընդառաջ երթալով վարչության փափառին, գծած էր երանաշնորհ Հայրապետին մեծադիր նկարը:

ԹՂՓԱԿԻՑ

(Քեյրուր, «ԶԱՐԹՈՒՆՔ» օրաթեր, 8 օգոստոսի 1954 թ., № 261 (2953))

## ՀՈԳԵԶԱՆԳԻՍ ԵՐԶԱՆԿԱԾԻՇԱՍԱԿ ԳԵՂՐԳ Զ. ՀԱՅՐԱՄԵՏԻ ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ԱՌԹԻՎ

Նախորդ թղթակցություններիս մեկում մեջ գրած էի, թե մեծ պատրաստություններ կտևնվեին արժանավայել կերպով տոնելու համար երանաշնորհ մեծ Հայրապետին՝ Գեղրդ Զ. ի քառասունքը: Արդարեկ, մեր ակնկալությունները իրականացան. բոլոր հայրենասեր հայերը և Ս. էջմիածնի հավատարիմ զանգվածը իր ամբողջությանը մեջ խուներամ եկած էին Պրադրյի Ս. Սահակ-Մեսրոպ թարգմանչաց եկեղեցին՝ հարգելու համար անմոռանալի հիշատակը մեծանուն Կաթողիկոսին: Հոն էր Պրադրյի մայր եկեղեցվո վարչական կազմը ամբողջությամբ: Հոն էին նաև զանազան կազմակերպություններու, թերթերու և հարանվանություններու ներկայացուցիչները:

Լուսաճակատ մեծ հարուստոնքի արարողության համար Փարիզեն մասնավոր կերպով հրավիրված էր Կաթողիկոսական նվիրակ Սերովը ծայրագույն վարդապետ Մանուկյան, որ խոսեցավ իր լավագույն քառոզներն մեկը: Հոգինորհ վարդապետը վեր առավ հանգույցալ Հայրապետին արժանիքները, հասնելով մինչև Հայրենական պատերազմի օրերը, և եղակացուց ըսկելով. «Տիտանները չեն մեռնիր: Տիտան մըն էր նաև մեծ Հայրապետը, որուն անոնը և հիշատակը վառ պիտի մնան հայության սրտին մեջ»:

ԹՂԹԱԿԻՑ

(Թեյրուր, «ԶԱՐԹՈՒՆՔ» օրարեց, 6 օգոստոսի 1954 թ., № 264 (4956))

## ԳԵՐԱՇՆՈՐՀ ՄԱՍԻԲԻ ԱՐՔԵԴԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆ ՄԱՐՍԻԼԻՈ ՄԵԶ

Անցյալ կիրակի առավոտ, Պրադրյի Ս. Սահակ-Մեսրոպ մայր եկեղեցվո մեջ պատրաբեց և քարոզեց գերաշնորհ Տ. Մամրեկ արքեպիսկոպոս Գալֆայան:

Մորազան հայրը շատ պերծիմաստ կերպով իր տպավորությունները ներկայացուց հանրության՝ մեր Հայրենիքին մասին: Շատ խսնդավառ էր սրբազանը Հայրենիքի գերեթքով, ըլլա այս շինարարական թե մշակութային մարգերու մեջ: Բաղդատելով Մարսիլիան ու Երևանը, Մամրեկ սրբազան գերիշվեր գուավ Երևանը ոչ թե անոր համար, որ Հայրենիքի մայրաքաղաքն է, այլ անոր համար, որ իսկապես բարձր է Երևանը որպես քաղաք՝ Մարսիլիային:

Հանրությունը հետաքրքրությամբ հետևեցավ սրբազանին՝ երբ այս վերջինը կխոսեր հանգույցալ մեծ Հայրապետին և Ս. էջմիածնա մասին.—

«Կրոնական ազատության մասին շարախոսողներ կան արտասահմանի մեջ: Կրոնքը ազատ է մեր Հայրենիքին մեջ. երբ գերաշնորհ Տիրան սրբազան ներսոյան ուղեց Հա-

յաստանյաց եկեղեցվո վրան ավելցնել «օրթոդոքս» մակղիրը, երջանկահիշատակ Հայրապետը չվարանցավ իր ձայնը բարձրացնել՝ շեշտելու համար գործված սխալը, այսինքն մեր եկեղեցին «օրթոդոքս» չէ՝ այլ Առաքելական և Հայաստանյաց, նկատի չառնելով ուսական մեծազանգված օրթոդոքս հասարակությունը:

«Եկեղեցիները միշտ լեցուն են հավատացալներով: Ի՞նչ է պատկերը արտասահմանի մեջ, մանավանդ հոս, Մարսիլիո մեջ: Մարսիլիո հայ հավատացյալները ո՞ւ են: Քանի մը տասնյակ ներկա հայ մայրերն են, որ կներկայացնեն մարսիլահայ հավատացյալ հասարակությունը»:

Հայրենիքի և Ս. էջմիածնի հանդեպ հավատարմության հորդորներ տալով վերջացուց իր քարոզը Մամրեկ սրբազան:

ԹՂԹԱԿԻՑ

(Թեյրուր, «ԶԱՐԹՈՒՆՔ» օրարեց, 7 օգոստոսի 1954 թ., № 265 (4957))

## ՌՈՒՄԱՆԱՑԱՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ՍՈՖԻԱՅԻ ՄԵԶ

Ինչպես հայտնի է, 2—3 շաբաթե ի վեր Բուզարիս մեջ հյուր է Ռումանահայ թնմի առաջնորդ և էջմիածնի Գերապետ Հոգմանը Հոգմանը Խորհուրդի անդամ գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյան, որ վաղութիս շաբաթ մը քաղաքներուն մեջ այցելություններ կկատարե այս պահուա: Իրման կընկերանա Ռումանիայ թեմական խորհուրդի քարտուղար Հ. Գալգիաքյան:

Նորին սրբազնությունը հրապարակային բանախոսություն մը ըրավ սեպտեմբեր 7-ին եկեղեցիին մեջ, նյութ ունենալով «Հայաստանի պատմական հիշատակարանները»:

Մորազանի այս բանախոսությունը առաջ լուց սկիզբ մեր մշակույթի դարավոր հնություններան վրա, որինք անհափշտակելի գանձերը նշանաշխ գարերու հոլովությին մեջ, կուրծք տալով բոլոր ոտնձգություններուն և

五〇

պահպաննելով զանոնք մեր աշխի լուսի պես  
Ան ամեն մի թանկարժեք հնովթյան վրա  
կանգ առնելով, ունկնդիրներու սրտերը  
կեցներ անհուն կարոտով գեպի այս բնա-  
կավայրը, ուր այդ արժեքները հպարտանքի  
առանես կուպանալին:

Իսկ սեպտեմբերը՝ 10-ին, Հրեաներու տան մեջ, սրբազնը հանդիս և կավավ քանախոսությամբ՝ «Տպավորություններ Սովորական Հայաստան են»:

Հազվադեպ պետք է նկատել այս ելույթը հոգևորականի մը կողմէն, որ մեր Հայրենիքի իրադարձություններով կմոտենա մաքուր զգացումով, պատվավոր հայու գիտակցութամբ:

Իր ականատեսակի տպավորությունները հայոնություններ էին, որոնց պատկերացումներում մեջ ան կշշտեր մեր ժողովուրդի հոգեկան ապրումները, շինարար ոգին և քարձի հայրենասիրությունը: Եվ այս բռուրը դրվագնելով ճշմարիտ գեպերու լույսին տակ:

Սրահի խուռներում բազմությունը հայրենասիր հոգիորականի պարզ և համովիշխոսքին մեջ կզգար Սովետական Հայաստանի արագընթաց վերելքը և ժողովրդին կանոն՝ իր պահով հանունը անուռականներում:

Մեր Հայունիքի վերաբեր նկարագրելիս,  
սրտերը հուզվել հետո, ան իր խոսքը ուղղեց  
նաև մեր փողովորոյ հետեւի օպոածեա-

Նության, որու սայթաքումներուն վրա իր  
մատը դրավ փաստացի կերպով, վեր հանից  
ռուս մեծ ժողովուրդի փրկարար օժանդակու-  
թյունը, դատապարտնելով արևմտյան իմպե-  
րիալիստներու կորստաբեր և խարդախ վե-  
րաբերումը մեր ժողովուրդի հանդեպ, Նորին  
Սրբազնությունը հորդորեց գնահատելու-ժո-  
ղովրդա-դեմոկրատական երկիրներու մեջ  
մեր գտած անսահման ազատությունը, գիտ-  
նալով, որ արևմտյան կապիտալիստական  
երկիրներու մեջ հայ հայրենասերները կհե-  
տապնդվին, ուր չի թույլատրվիր. Նույնիսկ  
խաղաղության մասին խոսիլ ու հորդորեց  
շխարվիլ նույն այդ շրջանակներն, նոր ա-  
նոնք խարդախ նպատակներով ձեռք կերկա-  
րվն մերի:

Պալճան եպիսկոպոսը մոտ երկու ժամ  
տևել իր խոսքը ավարտեց, փառաբանելով  
Սովետական Միության իշխանությունը, որ  
Հնարավորություն տված է Սովետական մեր  
Հայրենիքի ծաղկման և զարգացման, ինչպես  
նաև պաշտպան կանգնմանը ու ժողովուրդներու  
եռաւորության ու խառապության:

Ունկնդիր հասարակովովունը սրտապլնիդ-  
ված դուրս եկավ սրացն, իր հավատքը ա'լ  
ավելի գորացնելով դեպի Սովետական. Հա-  
յաստանի երջանիկ կյանքը:

ԹՂԹԱԿԻՑ  
(Բուլարեստ, «ԵՐԵՎԱՆ»,  
17 սեպտեմբերի 1954 թ.)



07000120  
1971-07-10 10:00:00-10:00:00  
(1971) 07000120